


ՄԻՏՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Պօղոս Առաքեալ կը խօսի փակուած միտ-
բերու մասին (Բ. Կր. 3.14-15), ապականած
միտքերու մասին (Ա. Տիմ. 6.5), բքացած
միտքերու մասին (Բ. Ժտ. 1.9), աշխարհիկ
գիտութիւններով գրաւուող միտքերու մա-
սին (Կղ. 2.8), մարմնականին կառչած միտ-
քերու մասին (Հո 8.7), խաւարած միտքերու
մասին (Եփ. 4.18):

Նման միտք մը «Աստուծոյ թշնամի է,
որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնա-
զանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ» (Հո. 8.7):
Բայց որպէսզի բարեկամ ըլլայ Աստուծոյ ու
կարենայ հնազանդիլ անոր խօսքին ու կամ-
փին, պէտք է աղօթէ, որ Աստուած նորոգէ ու
նոր մարդ դարձնէ զինք (Հո. 12.2), լուսա-
ւորէ զինք (Եփ. 1.18), եւ իր մէջ դրոշմէ իր
օրէնքները (Եբր. 8.10, 10.16): Երբ Աստուած
իր Սուրբ Հոգիին ու սուրբ խօսքին միջոցաւ
բանայ ու նորոգէ մեր միտքերը, այն ատեն
միայն զինք պիտի ֆանջնանք մշտարտապէս
(Ա. Յե. 5.20), եւ այն ատեն միայն անգրաղ
միտքով Տիրոջ հնազանդութեան պիտի նը-
ւիրուինք (Ա. Կր. 7.35): Արդարեւ, նորոգ-
ւած միտքը պատրաստ եւ արթուն եղող
միտքն է, որ իր ամբողջ յոյսը կապած կ'ըլլայ
փրկութեան (Ա. Ժտ. 1.13): Նորոգուած միտ-
քը Աստուծոյ կամքը գիտցող ու կատարող
միտքն է, Փրկչին սիրոյն մասին խոկալով
հրեուացող միտքն է, իր հայեացքը մնայուն
կերպով երկինք սեւեռող միտքն է, մշտար-
տութիւնը սիրող ու ստութեանէն գարշող
միտքն է: Նորոգուած միտքը Աստուծոյ հա-
մար ընդունելի ու կատարեալը ֆանջցող եւ
լաւն ու բարին հետապնդող միտքն է (Հո 12.2):

ՍՐԲԱՆՈՅՍ ՄԻՒՈՆԸ




Միւ ռոնու ած Մանու կը

Մանուկը մկրտելէ անմիջապէս
ետք Հայ եկեղեցին զայն կը դրոշմէ
միւռոնով: Դերենիկ եպիսկոպոս կը
հաստատէ, թէ՛ «Դրոշմը Սուրբ Հոգիի
ընդունելութեան խորհուրդն է: ...
դրոշմին միջոցաւ է, որ մկրտեալ
մանուկը Սուրբ Հոգիին շնորհն ու
պարգեւները կը ստանայ»(10):

Ս. Գրիգոր Տաթևացին կ'ըսէ.
«Ջուրով մկրտուելով՝ Քրիստոսի
մահուան հաղորդակից կը դառնանք
եւ Աստուծոյ զաւակներ կ'ըլլանք, իսկ
միւռոնով կնքուելով՝ Սուրբ Հոգիին
շնորհքներուն կը միանանք»:

Տաթևացին կ'ըսէ նաեւ, որ՝
«Միւռոնով մանուկը դրոշմելն է, որ
կը հաստատէ մկրտութեան խորհուր-
դը. միւռոնը կը տրուի, որպէսզի
Սուրբ Հոգիին միջոցաւ զօրացուի ու
քաջութեամբ լեցուի մանուկը: Միւռո-
նը մկրտութեան ժամանակ տրուած
Սուրբ Հոգին է, որով կը քաւուին մեր
մեղքերը»(12):



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՌԷ ԽՄ ԸԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(ՍՀ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 10 ՅՈՒՆԻՍ 2022 ԹԻՒ 28

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 2.5-11: Հռ. 9.30-10.4: Ստ. 13.24-30

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԷՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 13.24-30

ՏՕՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՓՈՅ ԳՏՄԱՆ

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Մարդ մը լաւ սերմեր
ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին
եկաւ որո՞մ ցանեց ցորենին մէջ եւ զնաց: Երբ սերմերը աճեցան եւ սկսան հասկ
կազմել, այն ատեն որո՞մն ալ երեւցաւ:

Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր
չցանեցի՞ր արտիդ մէջ, ուրկէ՞՞ հապա որո՞մը»:

Ան պատասխանեց. «Ասիկա թշնամիի գործ է»:
Ծառաները ըսին. «Կ'ուզե՞ս, որ երթանք եւ որո՞մը քաղենք»:
«Ո՛չ,- պատասխանեց տէրը,- որովհետեւ որո՞մը քաղած ատեն կրնայ ըլլայ,
որ երկուքն ալ միասին արմատախիլ ընէք: Զօգե՛ք, որ երկուքն ալ միասին աճին
մինչեւ հունձքի ժամանակ, եւ հնձուորներուն կ'ըսես, որ նախ որո՞մը քաղեն,
խտրձեր կազմեն այրելու համար, եւ ապա քաղեն ցորենը եւ ամբարեւ
շտեմարաններու մէջ»:

Ահաւասիկ ճիշդ ասոր կը նմանի երկինքի արքայութիւնը:

ՕԳՏԱԳՈՐԾԷ՛ ՍԻՐՏԴ

Եթէ «Աստուծոյ խօսքը կենդանի է» (Եբր 4.12) հապա ինչո՞ւ չի կրնար
կենդանացնել իրենց հաւատքին մէջ մեռած մարդիկը: Եթէ Աստուծոյ խօսքը
կրնայ մեր հոգիները փրկել (Յկ. 1.21) հապա ինչո՞ւ կորսուած մարդիկ չեն
փրկուիր երբ կը լսեն զայն: Չշարունակենք «եթէ»-ներու շարքը: Կանգ
առնենք եւ մտածենք պատասխանին մասին: Աստուծոյ խօսքը լսողներուն
մէջ ո՞նանք կ'օգտագործեն իրենց ականջները եւ ո՞նանք ալ իրենց սիրտերը:
Սիրելի ընթերցող, ի՞նչ կ'օգտագործես, երբ Աստուծոյ խօսքը կը քարոզուի.
աչք ու ականջ, թէ՛ սիրտ ու հոգի: Եթէ Աստուծոյ խօսքը հասնի ականջիդ,
դուն չես փոխուիր, իսկ եթէ հասնի սիրտիդ՝ կը փոխուիս:

**ԳԻՏ ՏՓՈՅ
Ս.ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ**

Ս. Աստուածածինին նուիրուած սօ- ներու շարքին, յետագային աւելցան նա- եւ իր գործածած իրերու նուիրուած սօ- ներ, որոնցմէ մէկն է Ս. Աստուածածինի Տուփի գիւտի սօնը:

Ս. Աստուածածինի Տուփի գիւտը տեղի ունեցած է հետեւեալ ձեւով: Եր- կու իշխաններ ուխտի կը գտնուին Երուսաղեմ: Երբ անոնք կը հասնին Գալիլիա, այնտեղ կը տեսնեն հրեայ կնոջ մը տան առջեւ հաւաքուած բազմութիւն մը՝ բաղկացած ամէն տեսակի հիւանդներէ: Հետաքրքրուելով ներս կը մտնեն եւ կը տեսնեն տուփ մը: Հրեայ կնոջմէ կ'իմանան, որ տուփը ժամանակին կը պատկանէր Ս. Կոյսին: Իշխանները կ'երթան Երուսաղեմ, շինել կու տան նոյն տուփէն օրինակ մը եւ վերադառնալով կնոջ բով, իրենց տուփը կը փոխանցեն անոր եւ Ս. Կոյսին իսկական տուփը կը տանին Պոլիս եւ կը պատմեն պատահածը Պատրիարքին: Պատրիարքը մեծ հանդիսութեամբ տուփը կը գետեղէ եկեղեցւոյ մէջ եւ յատուկ օր կը նշանակէ տօնելու համար Գիւտ Տփոյ Ս. Աստուածածինի սօնը:

Այս սօնը մեր եկեղեցւոյ տօնացոյ- ցին մէջ անցուցած է Սիմէոն կաթողիկոս 1774-ին իր հրատարակած տօնացոյցին մէջ եւ կը տօնակատարուի Յունիս, Յուլիս ամիսներու միջեւ:

Տօնը ըստ եկեղեցւոյ տօնացոյցին Կիրակի 10 Յուլիս 2022-ին է:

**Ինչո՞ւ Աստուծոյ
ողորմութիւնն ու գթութիւնը
խնդրելու համար
հաւատացեալներուն
կը թելադրուի
ծոմապահութեամբ աղօթել:**

Որովհետեւ ծոմապահութիւնը խո- նարիութեան, հեգութեան, անձնուի- րութեան եւ եսի ունայնացման արարք մըն է, գոր ենթական պէտք է գործով ցոյց տայ իր Արարիչին՝ հրաժարելով աշխարհի բոլոր ցանկութիւններէն եւ անոնց առթած հանոյքներէն ու վայելի- ցներէն՝ արժանանալու համար Աստու- ծոյ սիրոյն: Ծոմ պահողը իր սրտին ամբողջական սէրը արտայայտած կ'ըլ- լայ Աստուծոյ հանդէպ՝ հրաժարելով իր մարմնոյն կենսական եղող հացէն ու ջուրէն: Ան իր հաւատքն ու համոզումը յայտնած կ'ըլլայ Աստուծոյ խօսքին՝ թէ «Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապա այն ամէն խօսքով, որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ»:

Ծոմապահութեան կամ պահի հետ համընթաց կատարուելու են աղօթք եւ ողորմութիւն: Յոյժ թելադրելու է, որ հաւատացեալներ ծոմապահութեան կամ պահին պատճառով ծախսերէն կրճատուած գումարները յատկացնեն աղքատներու կամ բարի նպատակներու:

**Հ Ո Գ Ե Ի Ո Ր
Պ Ա Տ Գ Ա Ս**

**ՔՐԻՍՏՈՍԻ ՆՄԱՆ ՔՐԻՍՏՈՍՆԵԱՅ
ՄԱՐԴՆ ԱՆ ԱՄԵՆ ՕՐ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ
ՊԷՏՔ Է ԸԼԱՅ**

Յիսուսի ԳալիլՇա հասնելուն եր- րորդ օրը հարսանիք մը կար (Յհ. 2.1): Ինչո՞ւ Աւետարանիչը կը շեշտէ, թէ հարսանիքը Յիսուսի ԳալիլՇա հասնե- լուն երրորդ օրն էր: Մեծն Կիրեղ կ'ըսէ. «Աւետարանիչը "երրորդ օրը" բացատրութեամբ, կ'ուզէ յստակ դար- ձընել, թէ Յիսուս իւրաքանչիւր նոր օր՝ նոր գործ մը եւ նոր ծառայութիւն մը կը կատարէր: Յիսուս ոչ մէկ օր երկրի վրայ անցուց առանց գործի: Նոյնպէս, ով որ կը միանայ Յիսուսի, իր կեանքի բոլոր օրերը՝ գործի օրեր կ'ըլլան:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ
Հ Ո Գ Ե Ի Ո Ր ԴԱՍԸ**

Առանց գործի անցուած օր մը՝ առանց Քրիստոսի անցուած օր մըն է, իսկ առանց Քրիստոսի անցուած օր մը՝ յաւիտենապէս կորսուած օր մըն է: Մենք ի՞նչպէս կ'անցնենք մեր օրը. ուրիշին գործին միջա- մո՞վիս ըլլալով, թէ՛ Տիրոջ գործը կատարելով: Յիսուս կը հաստատէ, թէ Հայրը եւ ինք միշտ կը գործեն մարդոց փրկութեան համար (Յհ. 5.17): Եթէ մենք Աստուծոյ զաւակներն ենք՝ մնայուն կերպով պէտք է աշխատինք մարդոց փրկութեան համար:

ԱՄԷՆ

**ԵՐԲ ԱՏՈՐԾՄԷ ԶՕՐՈՒԹԻՒՆ ԵՐ
ՇՆՈՐՀՔ ԿՈՒՉԵՍ ԽՆԴԻՆԷ,
Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 59**

Թշնամիներէս ազատէ զիս, ո՛վ իմ Աստուածս, վրաս յարձակողնե- րէն պաշտպանէ զիս: Ազատէ՛ զիս չարագործներէն, արիւնահեղ մար- դոցմէ փրկէ զիս: Տես, ահա, դարան լարած՝ ինծի կը սպասեն, ինծի դէմ դաւ կը նիւթեն վայրագ մարդիկ, իմ ոչ մէկ մեղքիս կամ յանցանքիս հա- մար, Տէր: Ոչ մէկ անօրէնութիւն գոր- ծած եմ, բայց կը յարձակին եւ ինծի դէմ ճակատ կը կազմեն: Ել, տես օգնէ ինծի: Դուն Տէր, Ամենակա՛լ Աստուած, Աստուածը քու ժողովոր- դիդ, ե՛լ, պատժէ բոլոր ազգերը, ողոր- մութիւն ցոյց մի տար նենգ չարա- գործներուն: Ամէն իրիկուն կը վերա- դառնան, շան պէս ոռնալով քաղա- քին շուրջ կը դառնան, իրենց բերնէն դուրս փսխելով սպանիչ խօսքեր, ո- բոնք իրենց շրթունքներուն վրայ են միշտ, որովհետեւ կը խորհին՝ «Ո՞վ է լսողը»: Բայց դուն, ո՛վ Տէր, կը ծի- ծաղիս անոնց վրայ, եւ կը հեզնես այսպէս խորհող ազգերը: Ո՛վ իմ Զօրութիւնս, քեզի կը սպասեմ, որով- հետեւ ապաւէնս ես, ո՛վ Աստուած: Չիս սիրող Աստուածը ինծի օգնու- թեան պիտի հասնի, Աստուած ինծի յաղթապանձ նայիլ պիտի տայ թըշ- նամիներուս վրայ: Մի՛ բնաջնջեր զանոնք շուտով, որպէսզի չըլլայ թէ իմ ժողովորդս մոռնայ, այլ՝ քու գօրութեամբ ցիր ու ցան ըրէ զանոնք, եւ նուաստացուր զանոնք, ո՛վ Տէր, դուն՝ մեր պաշտպան վահանը:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ